

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՆԻՑՑԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Ուրախությամբ պետք է նշել, որ վերջին տարիներին զգալի աշխուժություն է ապրում ֆրանսահայ եկեղեցական-մշակութային կյանքը: Հայ Եկեղեցու և մշակութային կենտրոնների համագործակցությունը դրականորեն է ազդում հայության ազգային գիտակցության վրա և օժանդակում հայապահպանման կարևոր գործին:

Այդպիսի մի հաւմագործակցության վառ արտահայտությունն է Նիցցայի մշակութային տարեկան ծրագիրը, որ իրագործվում է Հայ Մշակույթի ակումբի կողմից: Հայոց պատմություն և կրոն, հայկական ճարտարապետություն, երաժշտություն, գրականություն և կինո,—ահա ձեռնարկների այն ծիրը, որ Նիցցայի հայությունը առաջադրել է իրականացնել 1986 թվականին: Ի թիվս այլոց, նախատեսված է նաև, որ հոգեշնորհ Տարոն վարդապետ Ճերեճյանը պիտի վեկուցի «Հայերի հին հավատալիքներն ու ավանդությունները» նյութի մասին: Դասախոսությունները տեղի պիտի ունենան քաղաքի հայկական եկեղեցում:

ԱՐՍԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԲԵՐՅԱՆԸ ՇՎԵԴԻԱՅՈՒՄ

1985 թվականի սեպտեմբերին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր կարգադրությամբ Ստոկհոլմ գործուղվեց Մայր Աթոռիս միաբան Արսեն եպս. Բերբերյանը:

Շվեդիայի հայկական գաղութը բազմամարդ չէ, բայց զանազան քաղաքներում սփռված հայությունը կարիք ունի հոգևոր կազմակերպման՝ հայությունը Մայր Եկեղեցու և Մայր Հայրենիքի շուրջ համախմբելու համար:

Ուստի Արսեն սրբազանը առաջին իսկ օրերից կազմակերպչական աշխատանք ըսկըսեց՝ ի մի բերելու հայության ջանքերը և նպատակամղելու հայապահպանման վսեմ գործին: Նախ պետք էր կազմակերպել եկեղեցական կյանքը, որովհետև այնտեղ չկա հայկական եկեղեցի. արարողությունները կատարվում են քույր Եկեղեցիների կողմից ժամանակավորապես տրամադրված եկեղեցիներում: Տքնաջան աշխատանք անհրաժեշտ պիտի լինի այս նորակազմ համայնքին ազգային-եկեղեցական դեմք տալու համար, ստեղծելու համար առաջնորդարան, կրոնական, մշակութային, նույնիսկ մարզական համախումբ կյանք:

Ուրախությամբ պետք է նշել, որ Արսեն սրբազանը արդեն որոշ կազմակերպչական աշխատանքներ է տարել՝ ապահովելու համար գաղութի հայության համագործակցությունը, Շվեդիայի Ազատ Եկեղեցիների խորհրդի գործակցությունը, հայ գաղութի կյանքը նպատակամղելու ազգային-եկեղեցական-մշակութային գործունեության, ստեղ-

ծելու եկեղեցական և մշակութային կենտրոններ, կազմակերպելու հայկական դպրոցներ:

Հրապարակված է նաև հետագա գործունեության մի ծրագիր-առաջադրանք, որտեղ ընդգրկված է ծխական խորհուրդների վերընտրություն, ծխական նոր կանոնագրության մշակում, վանական՝ եկեղեցասեր տիկնանց, երիտասարդաց, կրթական և ապգային-կրոնական դաստիարակության և մարդկական հանձնախմբերի ստեղծումը, ունենալ թեմական կանոնագրություն և խորհուրդ, ապահովել թեմի տարեկան ծախսերը:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Սուրբ Սինոդի հրավերով սույն թվականի մարտի 3—7 օրերին Բուլղարիայում տեղի ունեցավ Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի Գործադիր կոմիտեի խորհրդակցությունը, որին մասնակցեցին աշխարհի 36 երկրների 110 հայտնի եկեղեցական և խաղաղության պաշտպանության գործիչներ:

Խորհրդակցությանը, հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, իրենց մասնակցությունը բերեցին Բուլղարահայ թեմական խորհրդի ատենապետ պրն. Կարո Տեր-Մեսրոպյանը և քարտուղար Տ. Մեսրոպ ավագ քահանա Պենլյանը:

Խորհրդակցության ընթացքում քննարկվեցին ներկա աշխարհը հուզող մի շարք խնդիրներ: Այնուհետև ընդունվեց կոչ-բանաձև՝ ուղղված աշխարհի բոլոր Եկեղեցիներին, որտեղ հորդորվում է մշտարթուն մնալ և սատարել համաշխարհային խաղաղության գործին:

Սույն կոչ-բանաձևում բարձր գնահատական է տրվել Սովետական Միության՝ խաղաղության ու վինաթափման դատին ի նպաստ առաջարկին, որը հրապարակվել է ընթացիկ տարվա հունվարի 15-ին: Կոչ-բանաձևում, որպես եզրակացություն, ընդգրծված է Եկեղեցիների բարոյական առաջնահերթ պարտականությունը՝ գործակցել նրման խաղաղասիրական ձեռնարկումներին և քրիստոնեական համայնքները մղել էկումենիկ խաղաղարարական աշխատանքների:

Խորհրդակցության մասնակիցներից կազմված մի պատվիրակություն, գլխավորությամբ Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ Նորին Սրբազնություն Կարոլի Տոթի, ընդունվեց Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության Պետական Խորհրդի նախագահի տեղակալ Միտկո Գրիգորովի կողմից:

Պատվիրակության մեջ էին մտնում Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի գլխավոր քարտուղար դոկտ. Լյուբոմիր Միրեժովսկին, Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետը և Հնդկաստանի, Չեխոսլովակիայի, Ռումինիայի, Մեծ Բրիտանիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Քենիայի, Պուերտո Ռիկոյի և Բուլղարիայի բարձրաստիճան հոգևորականներ: